

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՄԻԿՐՈԲԻՈԼՈԳԻԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ
ԱԿADEMİЯ NAUK ARMENSKOY SSSR
MIKROBIOLOGICHESKIY SBORNÍK

ՊՐԱԿ 2

1946

ՎԱՐ. II

ՄԵԶՐԱՔՑԱՆ Ա. Ա.

ՔՌՈՒՇՆԱՅԻ (Ervum vicia) ՊԱԼԱՐՄԲԱԿՏԵՐԻԱՆԵՐԻ
ՄՈՐՖՈԼՈԳԻԱԿԱՆ ԵՎ ՖԻԶԻՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒ-
ԹՅՈՒՆՆԵՐԸ

(1 հաղորդում)

Երկար տարիներ իշխում էր մոնոմորֆիզմի այն տեսակետը, թե յուրաքանչյուր մի բակտերիալ տեսակի հատուկ է որոշ ձեւներ իսկ պատճառով գոյություն ունեցող բազմաթիվ ձեւերը դիմում էին որպես առանձին տեսակներ։ Եվ միայն բիոլոգիայի ասպարիզում գիտության ունեցած նվաճումները պարզեցին այն հարցը, որ բակտերիայի յուրաքանչյուր մի տեսակն ունի իր զարգացման ուրույն ցիկլը և որ գոյություն ունեցող այդ բազմաթիվ տեսակներից շատերն իրենցից ներկայացնում են միևնույն տեսակի զարգացման տարրեր ձեւեր։

Խնչպես լյոնիսն է (1) հաստատում, բակտերիաներն իրենց կյանքի ընթացքում անցնում են զարգացման որոշ ցիկլ՝ զարգացման այդ ցիկլի հետ կապված են զանազան բջջարանական փոփոխություններ. սկզբում այդ փոփոխություններն ընդունվում էին իրեն պատճականություն, իսկ հաճախ՝ որպես ինվալյուցիոն ձեւեր։

Բակտերիալ ձեւերի բոլոր փոփոխությունները թերաւեն։ (1) բաժանում է երկու տիպի մողիֆիկացիայի, որոնք ժառանգար չեն անցնում և մուտացիաների, այսինքն՝ փոփոխությունների, որոնք ամրանում և անցնում են ժառանգարար։

Պալարմբակտերիաների փոփոխությունները թյուլին և Հետչինսոնը (1) կապում էին զարգացման ցիկլի հետ. ըստ Նրանց, թարմ երիտասարդ կուտառւաներում գերազանցում են կարճ ձողիկները, որոնք համաչափորեն ներկվում են, Հետագայում նրանք ներկվում են միայն որոշ կետերում, հանգույցներում կամ գուտիներում, այնուհետև գոտկավորված բջիջներն առաջացնում են։

կոկկեր, որոնք սկզբում անշարժ են, հետագայում ձեռք են բերում մտրակներ, այնուհետև ձգվելով՝ վեր են ածվում դուսկավորված բջիջների և մի առ ժամանակ մնալուց հետո՝ կորցնում են մտրակները:

Բեյերինկը (2) պալարաբակտերիաների փոփոխությունները դիտել է մաքուր կուլտուրայում, Ըստ նրա, բակտերիաներն սկըզբում ներկայացնում են մանր, կոկկանման հատիկներ, որոնք այնուհետև բույսի մեջ ներս թափանցելուց հետո վեր են ածվում շարժուն ձողիկների և ապա բակտերոյիդների:

Պալարաբակտերիաների զարգացման ցիկլը, ըստ Ֆրանկի, չի սահմանափակվում բակտերիոյիդ ձեռքով, այլ վերջինս նորից առաջացնում է մանր հատիկներ, Ըստ նրա՝ բակտերիաներն առաջացնում են զոոգլեյաներ, որոնցից ծագում են թելանման մարմիններ, իսկ այդ վերջիններից, բաժանման հետևանքով, ստացվում են երշիկանման ձեռք, ին հատիկային կազմով. այս հատիկները հետագայում վեր են ածվում նորմալ ձողիկների:

Զարգացման ցիկլը Բեյլեյը և Հուտչինսոնը հետեւյալ կերպ են նկարագրում. Սկզբում բակտերիաները ներկայացնում են անշարժ մանր կոկկեր, որոնք հետագայում խոշորանում են: Այդ կոկկերը զառնում են շարժուն օվալ բջիջներ և վեր են ածվում ձողիկների, իսկ այդ վերջինները կորցնում են իրենց շարժման ընդունակությունը և վակուուլավորվում են:

Պալարաբակտերիաների զարգացման ցիկլը, ինչպես մաքուր կուլտուրաների, այնպես և պալարների մեջ, տալիս է Կաս Վակելյավը. (3). Ըստ նրա, թարմ կուլտուրայում բակտերիաները ներկայացնում են կոկկեր, ձողիկներ: Մի քանի որից հետո սըրանց մոտ դիտվում է կոնյուկցիա, որի հետևանքով, ըստ Լյոնիսի, կարող են առաջանալ ուեգեններատիպ մարմիններ: Թարմ պալարներում առաջանում են կոկկեր կամ ձողիկներ, այնուհետև բակտերոյիդներ: Այս վերջինները ծերացած զանայում առաջնայի նույն զոոգլեյաներ, որոնցից դարձյալ սկիզբ են առնում կոկկեր և ձողիկներ: այդ պատկերը դիտվում է պալարները հողում քայլած վելուց հետո: Բակտերիաների զարգացման ցիկլը կապված աղոտի կուտակման և նրա ձեռքի հետ ուսումնասիրել են Մ. Գ. Կորսակովուն և Գ. Վ. Հովստինան (4): Ըստ այդ հեղինակների, պալարների մեջ, բույսի ամրող վեգետացիայի ընթացքում, պանվում են տարբեր երկարությամբ հատիկավոր ձողիկա-

ներ, ինչպես և բակաերոյիդներ. այս վերջիններն ավելի շատ են. բույսերի ծաղկման շրջանում:

Ուսումնասիրելով կորնդանի պալարաբակաերիաների ձևափոխությունները պալարներում, Ա. Պետրոսյանը և Ռ. Միքոպարեկյանը (5) տվել են հետեւյալ նկարագրությունը: Սկզբում թարմ պալարներում գտնվում են մանր հատիկներ, երբեմն էլ բարակ հատիկավորված ցանց, բույսի ծաղկման և պտղակալման շրջանում պալարներում լինում են տարբեր երկարության հատիկավորված ձողիկներ և մեծ քանակությամբ բակտերոյիդներ, հետագայում, աշնանը պալարներում գերակշռում են նորմալ ձողիկները, ձեռվա ամիսներին մնում են հատիկներ և մանր հողագեն ձողիկներ:

Այդ ուղղությամբ աշխատանք կատարել է նաև Կոնոկոտինան (6), որը նկարագրել է բակտերիաների մորֆոլոգիական ձևափոխությունը սիսեռի և լյուսինի մոտ, կապված բույսի զարգացման ստադիայից:

Պալարաբակտերիաների զարգացման ցիկլում, բակտերոյիդը ըջիջի ձևը նկարագրել են զրեթե բոլոր հետազողները բակտերոյիդներին նվիրված կան մի շարք աշխատություններ և գոյություն ունեն տարբեր կարծիքներ:

Բակտերոյիդները՝ ձևափոխված բակտերիաներ են, ասում է Բեյբենկը (2), որոնք այլևս կենսունակ չեն, այլ ծառայում են սրպես սպիտակուցային նյութերի պաշար: Հստ այս հեղինակի, պալարներն անցնում են զարգացման երկու փազ: Առաջին փազայում ըջիջների պլազմայից ներս են մտնում բակտերիաները, որոնք աստիճանաբար կորցնում են իրենց վեգետատիվ հատկությունները և, ի վերջո, երկրորդ ֆազայում վեր են ածվում բակտերոյիդ ձևերի, որոնք այլևս անելու ընդունակ չեն: Մյուլերը և Շաապը (7) գտնում են, որ ամեն մի արտաքին ձևի շեղում, թեքում նորմալ ձողիկներից պալարաբակտերիաների համար հիվանդագին երեսություն է և ոչ օգտակար, հետեւապես և բակտերոյիդները հիվանդագին և ոչ գործունյա ձևեր են: Հակառակ կարծիքի է Լյոնիսը. նա պնդում է, որ բակտերոյիդները հանդիսանում են բակտերիաների զարգացման ցիկլի մի աստիճանը, որպիսի վիճակում նրանք ավելի գործունյա և ավելի ակտիվ են մինում:

Պալարաբակտերիաների և նրանց բակտերոյիդ ձևերի շուրջը մեծ թվով աշխատանքներ են կատարել նորեն և Հիւաները (8):

Ըստ նրանց, բակտերոյիդները համզիսանում են ակտիվ ձևեր։ Հայտնի են նաև այդ ուղղությամբ հիլաների և Շոյորմերի աշխատանքները, որոնք բակտերոյիդներ դիտել էին ոչ միայն պալարիներում, այլև արհեստական սննդանյութերի միջավայրում։

Բակտերոյիդները որպես ակտիվ, բիոլոգիապես կենսունակ մի ժակ, ընդունված է նաև ծիպֆելի (9) կողմից, ըստ որի բակտերոյիդները զարգացման որոշ նորմալ աստիճան են ներկայացնում։ Նույն կարծիքին են և Հարթլերը, Զյուլիսինգը, Բուլիսանան, Պեկոն, Ֆրեդը, Տոհրնառնը, Շյոնբերգը և ուրիշները։ Մի կարծիք, որը և ճշտվում է նաև վերջին նորագույն հետազոտություններով։

Թռուշնայի բակտերոյիդ ձևերը ներկայացնում են բավականին խոշոր գնդաձև մաքմակներ։

Այսպիսով, ինչպես տեսանք գոյություն ունեն պալարաբակտերիաների բազմաթիվ ձևեր, որոնցից շատերը ներկայացնում են միշնույն տեսակի զարգացման տարրեր աստիճանը։ Այդ իսկ պատճառով բակտերիաների առանձնհատկությունը և տեսակները որոշելու հարցում մեծ նշանակություն ունի տարրեր մննդատու միջավայրում նրանց մորֆոլոգիական ձևերի ուսումնասիրության հարցը։

Թռուշնայի պալարաբակտերիաների մորֆոլոգիական ձևերի փոփոխությունն ուսումնասիրելու համար մենք հետազոտեցիք 13 շտամներ, աճեցնելով նրանց հետեւյալ սննդանյութերի վրա՝ լորու ազարի, հողի էքստրակտ մաննիտ ազարի, հողի էքստրակտ-զլիցերին-ազարի, կարտոֆիլ-ազարի, կարտոֆիլի կարվածքների, մսաջուր պեպտոն ազարի, մսապեպտոնային ժելատինի, լորու էքստրակտի, մսապեպտոնային բուլյոնի և կաթի մեջ։

Այդ տարրեր մննդանյութերի վրա անեցըրած գաղութիներից պատրաստվել են պրեպարատներ հետեւյալ ձևով. առաջին տասնօրյակում ամեն օր, այնուհետև օրամեջ և վերջում 3—4 օրը մեկ անգամ։ Փորձը տևել է 45 օր, փորձի վերջում ներկվել են պրեպարատները կարբոլ ֆուքսինով և դիտվել միկրոսկոպով։

Տարրեր մննդանյութերի վրա գոյուշնայի պալարաբակտերիաների մորֆոլոգիական փոփոխությունները ցույց են տվել որ հիմնական սննդանյութերի վրա, հեղուկ միջավայրում, շատամների մեծ մասը տալիս են մորֆոլոգիական հեռելյալ փոփոխությունները։

Սկզբում հաստ ձողիկներ են, որոնք հետագայում վեր են

ածվում մանր հատիկների, իսկ երբեմն ձողերի վերջում գրյանում է բակտերիալ ցանց, որն ախուհետև վեր է ածվում կապսուլավորված բջիջների: Շտամների մյուս մասը սկզբում հաստ ձողիկներ են, որոնք հետագայում ձգվում, երկարում են, այսուհետև առաջանում են հատիկներ, այս վերջիններից՝ կարճ երիտասարդ ձողեր, հետագայում նրանք ծերանում, վակուլավորվում են: Մորֆոլոգիական այդ փոփոխություններն արտահայտվում են № 1 նկարում:

Ազարային միջավայրում պինդ սննդանյութերի վրա նկատվում են մորֆոլոգիական հետեւյալ փոփոխությունները—շտամների մեծ մասը, ինչպես այդ արտահայտվում է № 2 նկարում, ներկայացնում են մանր կոկանման ձողիկներ, որոնք ձգվում են հատիկավորվում են, այսուհետև վեր են ածվում հատիկների, սրանք էլ նորից ձողիկների, ու այդպես կրկնվում է մի քանի անգամ. վերջում ստացվում են դարձյալ երիտասարդ ձողիկներ:

Բակտերիանների կուլտուրալ հատկությունները՝ որոշելու համար, հիշյալ 13 շտամները նույն 11 տարրեր տեսակի սննդանյութերի վրա աճեցնելիս, տալիս են հետեւյալ բնորոշ կողմերը:

Մսաջուր—պեպտոն ագարի վրա հետազոտվող բոլոր 13 շտամն էլ, զիտոպոլիթյան հենց առաջին օրից, տալիս են շատ թույլ հազիվ նշմարելի աճեցողություն, որը և նույնությամբ շարունակվում է մինչև փորձի վերջը:


Մսաջուր—պեպտոն ժելատինի վրա քոռոշնայի պալորաբակտերիանները տալիս են շատ թույլ, հազիվ նշմարելի աճեցողություն, որը և շարունակվում է մինչև փորձի վերջը:

Հողի էքստրակտ մաննիտագար շտամների մեծամասնությունն այդ սննդանյութի վրա տալիս են ուժեղ աճեցողություն և սպիտակ գույնի, փայլուն, ուռուցիկ, հարթ եղերով գաղութներ, որոնց ցածի մասը լայնացած է. շտամներից միայն № 1 և Գոյգյուղուշը տալիս են միջին աճեցողություն:

Հողի էքստրակտ գլիցերին-ագար սննդանյութի վրա, գիտառության առաջին օրերին, բակտերիանների աճեցողությունը շատ թույլ է, հետագայում սկսում է ուժեղանալը. №յդ սննդանյութի վրա աճելու անսակետից շտամները կարելի է բաժանել երեք խմբի: Մի խումբը՝ № 2, № 3, № 4, № 5, Ախտայի, Աշտարակի, Զիգդամալ թաքունները և Զիգդամալ № 2 շտամները տալիս են ուժեղ աճեցողություն, մյուս խումբը՝ № 6, № 1,

յանձնութեցիր կասերց տմի
պահապահի, ընդունութափածութ զայտական գումար վերականգնած առաջարկ

28



և Գոյգյուղուշի շտամները
տալիս են լավ աճեցողուն-
թյուն և միայն № 7-ը՝
միջին աճեցողություն:


Բոլոր դեպքերում էլքակ-
տերիաներն առաջացնում
են սպիտակ գույնի, լորձ-
նոտ, փայլուն, հարթ եղ-
րերով գաղութներ, որոնց
ցածի մասը լայնացած է:
№ 1 և Զիգզամալ թաքուն-
ների գաղութը մյուսների
համեմատությամբ՝ ավելի
ուռուցիկ է:

Կարտոֆիլ-ագար — այս
սննդանյութի վրա բակտե-
րիաների մի մասը՝ № 1,
№ 2, № 3, № 4, № 5, № 6,
Զիգզամալ № 2 և Գոյգյու-
ղուշի շտամները տալիս են
թույլ աճեցողություն, իսկ
№ 7, Ալբայի, Աշտարակի,
Զիգզամալ թաքունների
և Բաշղյուղի շտամները
տալիս են միջին աճեցո-
ղություն: Այս սննդանյու-
թի վրա բակտերիաներն
առաջացնում են սպիտակ
գույնի, հարթ եղբերով,
փայլուն, լորձնոտ գաղութ-
ներ, որոնց ցածի մասը լայնացած է: № 2-ի տարբերությունը
մյուսներից՝ թեթև կնճոռոտ լինելն է:

Կարտոֆիլի կտրվածքների վրա — Բաշգյուղի, Զիգզամալ №
2 և Աշտարակի շտամները տալիս են շատ թույլ աճեցողություն.
մացած շտամները չեն աճում:

Մոսջուր-պեպտոնային բուլյոն. — այս սննդանյութի վրա
հետազոտվող շտամներից և ոչ մեկը չի աճում:

Կաթ. — պալարաբակտերիաների՝ կաթի մեջ աճեցողության
1113—13



Քառչնույի պալարաբակա. մորֆոլոգ. և ֆիզիոլոգ. առանձնահատկ.

սևումասիրությունը կատարել է նախ՝ ծիպֆելը՝ (9) և այսուհետև՝ Լյոնիսը և Հանսենը (15): Նրանք պալարաբակտերիաներին՝ դեղի կաթն ունեցած վերաբերմունքի տեսակետից՝ բաժանում են երկու խմբի: Առաջին խմբի մեջ, ըստ նրանց, դասվում են այն բակտերիաները, որոնք 1—4 շաբաթվա ընթացքում մակարդում են կաթը: Երկրորդ խմբում այն բակտերիաները, որոնք կաթը չեն մակարդում, մասամբ միայն քայլայում են կազեյինը, առաջացնելով հատուկ օղակ:

Կաթի նկատմամբ մեր բոլոր շտամմերը ցույց են տալիս նույն վերաբերմունքը, առաջացնելով թույլ պեպտոնիզացիա՝ սպիտակ շիջուկի անջատումով, բացառությամբ Բաշ-գյուղի շտամից, որտեղ պեպտոնիզացիան անհամեմատ ավելի ուժեղ է գնում:

Այդ հատկությամբ նրանք նմանվում են Լյոնիսի և Հանսինի նկարագրած երկրորդ խմբի բակտերիաներին:

Լորու էքստրակտ.—այս սննդանյութի վրա առաջին օրերը թույլ պղտորություն է նկատվում, հետագայում № 3, № 4, Զիգ-զամալ թաքումներ, Զիգգամալ № 2 շտամմերը հեղուկին տալիս են ուժեղ և համաշափ պղտորություն, իսկ սննդանյութի վերին շերտում առաջանում է նաև օղակ: № 1, № 7 և Աշտարակի շտամմերն ուժեղ պղտորելու հետ միասին, հեղուկի երեսին առաջացնում են փառ. № 6, № 2, Գոյգյուղուզի և Ախտայի շտամմերը տալիս են համաշափ թույլ պղտորություն:

Շտամմերից միայն Բաշ-գյուղին է տալիս միջին աճեցողություն և սննդանյութի վերին շերտում առաջացնում օղակ: Բոլոր շտամմերի դեղքում էլ վերջում հեղուկը պարզվում է և առաջանում է նստվածք:

Այս փորձին զուգահեռ տարվել է նաև քոռոշնայի պալարաբակտերիաների գաղութների աճեցողության և ձևերի նկարագրությունը՝ Պետրի թասերում, հետեւյալ սննդանյութերի վրա—լորի-տպար, մսաջուր—պեպտոն,—ադար, հողի էքստրակտ, գլիցերին-ադար, մաննիտ-ադար, կարտոֆիլ-ադար, մսապեպտոնային ժելատին: Փորձի ընթացքում այդ գաղութների վերաբերյալ կատարվել են դիտողություններ ու չափումներ:

Հետազոտվող շտամմերն ամենից լավ աճում են լորի-ադարի վրա, տալով փայլուն, լորձնոտ, ուռուցիկ, հորթ եղբերով, սպիտակ գույնի մեջ գաղութներ, 10—15 դր տրամագծով:

Սննդանյութերի մեջ երկրորդ տեղը բռնում է մաննիտ-

ագարը և գիշերին-ագարը, որոնց վրա նրանք աճում են միանման, տալով մեծ մասամբ սպիտակ գույնի, լորձնոտ, փայլուն, հարթ եղբերով, ուռուցիկ գաղութներ, 2—3 որո տրամագծով։ Ամենից վատ նրանք աճում են մսաջուր-պեպտոն-ագարի, կարտոֆիլ-ագարի և ժելատինի վրա։ Մսաջուր-պեպտոն-ագարի վրա շտամներից գրեթե բոյորը չեն աճում, բացի № 5, որը տալիս է շատ թույլ աճեցողություն։ Կարտոֆիլ-ագարի վրա միայն Գոյզյուղուշի և Ախտայի շտամներն են աճում, տալով փայլուն, սպիտակ գույնի, հարթ եղբերով գաղութներ, իսկ մնացած շտամներն այդ սննդանյութի վրա չեն աճում։ Ժելատինի վրա շտամներից աճում են միայն № 4 և № 6, տալով փայլուն, հարթ եղբերով, սպիտակ գույնի գաղութներ, 3—5 որո տրամագծով։ Մնացած շտամները չեն աճում։

Ուսումնասիրելով հետազոտվող շտամների կուլտուրալ հատկությունները, պետք է նշել, որ ընդհանուր առմամբ քոռչնայի պալարաբակտերիաները, իրենց հատկություններով չեն տարբերվում մյուս թիթեռնածաղկավորների պալարաբակտերիաներից։ Մսաջուր-պեպտոն-ագարի վրա գրեթե բոլոր շտամները, փորձի հենց առաջին օրից տալիս են թույլ, հազիվ նշմարելի աճեցողություն, որը և շարունակվում է մինչև փորձի վերջը։ Մսապեպտոն բուլյոնի վրա շտամներից և ոչ մեկը չի աճում։ այդ հատկությունը ևս բնորոշ է պալարաբակտերիաների համար և ճշտվում է զրականության տվյալներով։ Հայտնի են, օրինակ, Ա. Ե. Կրիսի, Ա. Ի. Կորենյակոյի և Վ. Ի. Միգուլինայի (16), Ա. Պետրոսյանի (17) այդ ուղղությամբ կատարած աշխատանքները։

Մսաջուր-ժելատինի վրա տալիս են թույլ, հազիվ նշմարելի աճեցողություն, առանց այդ սննդանյութը լուծելու։ Գրականությունից էլ հայտնի է, որ պալարաբակտերիաներից միայն մի մասն է, որ լուծում է ժելատինը, մյուսները չեն լուծում։

Կաթի մեջ այդ շտամներն առաջացնում են թույլ պեպտոնիզացիա, որը նույնպես համընկնում է գրականության տվյալների հետ։ Պետք է ընդգծել նաև այն, որ ուսումնասիրված 13 շտամներն իրենց կուլտուրալ հատկություններով իրարից խիստ կերպով չեն տարբերվում։

Քոռչնայի պալարաբակտերիաների բիոքիմիական հատկանիշներն ուսումնասիրելին, որոշվել է շաքարային լուծույթներում նրանց կողմից գաղ և թթու առաջացնելու հատկությունը, նիտրատների վերականգնումը և ինդոլի առաջացումը։

Շաքարային սննդանյութերի վրա պալարաբակտերիաների գաղ առաջացնելու և միջավայրի բեակցիայի փոփոխման հատկությունների ուղղությամբ վերջին ժամանակներու ուսումնասիրություններ կատարել են Ամերիկայի մի շարք գիտնականներ:

Սովորենալ թթուների առաջացում նկատում է առվույտի պալարաբակտերիաների մոտ:

Այդ հարցով զրադկել են նաև Բոլգուինը և Ֆրեդը, ըստ որոնց պալարաբակտերիաները թթու առաջացնելու տեսակնեաբց կարելի է բաժանել երկու խմբի Մի խումբն առաջացնում է թթու պըոդուկտներ, կաթի վրա աճելիս՝ տալիս է օղակ և ունի մորակների պերիտրիխ դասավորություն. այս խմբի մեջ են մտնում առվույտը, երեքնուկը, սիսեռը, լորին և այլն:

Մյուս խմբի մեջ մտնում են այն բակտերիաները, որոնք միջավայրը դարձնում են հիմնային, կաթի մեջ աճելու դեպքում օղակ չեն առաջացնում և ունեն մորակների մոնուրիթ դասավորություն:

Ուսումնասիրելով տարբեր պալարաբակտերիաների 18 շտամերը՝ Շյոնքերգն ընդհանուր առմամբ հաստատում է Բոլգուինի և Ֆրեդի գիտողությունները, միայն գտնում է, որ տարբեր բակտերիաների կողմից շաքարների վրա տված տարբերությունները կայուն չինելու պատճառով, չեն կարող հիմք ծառայել բակտերիաների խմբավորման համար: Նրա կատարած փորձերից պարզվեց, որ գեկստրինի վրա թթուներ առաջացնում են վիկայի, լյուպինի և կորնգանի պալարաբակտերիաները:

1930 թվին Ուոկերն ու Բրոունն իրենց փորձերից եկան այն եզրակացության, որ B. Radicicola meliloti-ի տարբեր շտամերը կարող են տալ տարբեր ֆերմենտացիա. շտամերի միասը, ըստ այդ հեղինակների, տալիս են թթու բեակցիա, մյուսները՝ հիմնային:

Մեր շտամերի այդ ֆերմենտացիոն հատկությունը որոշելու համար պատրաստվում է պեղապոնաջուր, ապա պվելացվում է 1% որևէ շաքար և թթու ֆուքսինի ջրային լուծույթ: Փորձանոթների մեջ դրվում են դաղի փորձանոթները, լցնում են նշված սննդանյութը և ավտոկլավում 1½ ատմոսփեր ձնշմանտակ, ստերիլիզացիայի ենթարկում 15 րոպե. այնուհետև սնընդանյութը վարակում են հետազոտավող շտամներով և ապա թթու և գաղ առաջացման վերաբերյալ դիտողություններ կա-

առըում. միջավայրը թթվելու դեպքում՝ սննդանյութը կար-
մըրում է:

Դիտողությունների ընթացքում պարզվում է, որ քոռչ-
նայի պալարաբակտերիաների հետազոտվող շտամներից և ոչ
մեկը գլյուկոզայի, սախարոզայի, լակտոզայի միջավայրում
թթու և դագ չեն առաջացնում:

Թոռշնայի պալարաբակտերիաների բիոքիմիական հատկա-
նիքներն ուսումնասիրելու հետ մեկտեղ, ուսումնասիրվել է
նաև նրանց նիտրատների վերականգնելու ընդունակությունը:

Պալարաբակտերիաների՝ նիտրատներ վերականգնելու ըն-
դունակությունը գեր շատ վաղուց նկարագրել են մի շարք հե-
ղինակներ, ինչպես օրինակ՝ Բեյլըինկը, Ցիպֆելը (9), Վիլսոնը,
Հիլսը, Լունարդը, Հանսենը, Պոնլամանը, Կելլերմանը և Բեկվի-
տը, Պրուխան, Ֆրեդը, իսկ վերջին ժամանակներս նաև Մյուլ-
բերը և Շտապը:

Հեղինակներից ուսանը, ինչպես օրինակ Պրուխանը, Հիլսը,
Վիլսոնը գտնում են, որ պալարաբակտերիաները նիտրատների
վերականգնածն նկատմամբ տալիս են բացասական ոեակցիա:
Այլ կարծիքի է Լունարդը. ըստ նրա, այստեղ գեր խաղացողը
կուլտուրայի ազոտ ֆիքսելու կարողությունն է, ընդ որում, որ-
քան ակտիվ է շտամը, այնքան նա ավելի քիչ է վերականգնում
նիտրատները:

Ֆրեդը (18) գտնում է, որ գե կախված է կուլտուրայի՝
իրեն ակտիվությունից և աճման արագությունից: Իրենց փոր-
ձերից ելնելով կելլերմանը և Բեկվիտը (13), Հանսենը գալիս են
այն եղրակացության, որ պալարաբակտերիաները նիտրատներ
վերականգնում են մինչև նիտրիտներ և մասամբ էլ՝ մինչև
աճոնյակ. այդ հաստատում է նաև Ցիպֆելը (9). սակայն նա
գտնում է, որ վերականգնումը տեղի ունի մինչև նիտրիտների,
և ոչ թե ամոնյակի առաջացումը:

Նիտրատների վերականգնումը, ըստ Մյուլբերի և Շտապի
(7), տեղի ունի վիկի, երեքնուկի և լոքու խմբի պալարաբակտե-
բիաների մոտ: Ըստ նրանց, այդ պրոցեսը, թույլ է կատարվում
ցյուղինի, սոյայի, բորինի մոտ. նիտրիտներ բոլորովին չեն առա-
ջացնում սերադելայի, կորնգանի, առվույտի և գոննիկի խմբի
քակտերիաները: Այսպիսով, ըստ այս հեղինակների՝ նիտրատ-
ների վերականգնումը կախված է պալարաբակտերիաների աե-
ատիներից և շտամներից: Այդ իսկ պատճառով երբեմն ստացվում

Է նիտրատների վերականգնման գրական, իսկ երբեմն էլ բացասական ուեակցիա: Նույն պատկերն է ստացվում նաև մեր փորձ ձերի ընթացքում: Չտամների մի մասը վերականգնում են նիտրատները, մյուսները՝ ոչ:

Նիտրատների վերականգնման ընդունակությունը պարզեցւ համար մեր կողմից պատրաստվում է լրու հեղուկ, նրա վրա պավելացվում է 0,05 % KNO₃ և ստերիլիզացիայի ենթարկելուց հետո վարակվում է հետազոտված շտամներով. Փորձը տեսում է 12: օր, նիտրիտների ներկայությունը որոշվում է Գրիսի ռեակտիվությունը:

Փորձի ընթացքում պարզվում է. որ հետազոտվող շտամների կողմից նիտրատների վերականգնումն սկսվում է վարակումից 10 օր հետո միայն:

Խնչպես ցույց է տալիս № 1 աղյուսակը, տասն օր հետո թույլ կերպով վերականգնում են № 3, շատ թույլ կերպով № 5 և Գոյցյուղուշի շտամները 12 օրից հետո. Ուժեղ վերականգնում են № 1 շտամը, թույլ կերպով № 3, և շատ թույլ կերպով № 2, № 4, ինչպես նաև Զիգդամալ շտամները:

Մնացած շտամները նիտրատներ չեն վերականգնում: Մեր փորձների ընթացքում, ինչպես ասացինք, շտամներից միայն մի մասն է վերականգնում նիտրատները, իսկ մյուսները չեն վերականգնում: Նույնը նկատել է նաև Ա. Գետրոսյանը կորնգանի պայմարակաների ուսումնասիրության ժամանակ:

Թվայօնայի պայմարակաների նիտրատների նիտրատների վերականգնումը

Աղյուսակ № 1

Շտամների №№	Նիտրատների վերականգնումը	
	10 օրից	12 օրից
1	0	ուժեղ
3	թույլ	թույլ
4	0	շատ թույլ
6	0	0
Ախոս	0	0
Ազոտակ	0	0
Զիգդամալ	0	0
Բաշ-դյուզ	0	շատ թույլ
Գոյցյուղուշ	շատ թույլ	0
2	0	0
5	շատ թույլ	շատ թույլ

Ուսումնասիրելով քռուշնայի պալարաբակտերիաների բիուքիմիական հատկանիշները՝ պետք է ընդգծենք հետևյալը, որ փորձարկելով շտամները տարբեր շաքարային միջավայրում—սահարողայի, գլուկոզայի, լակտոզայի վրա, նրանցից և ոչ մեկը զազ և թթու չեն առաջացնում: Որոշելով քռուշնայի պալարաբակտերիաների ինդոլ առաջացնումը էրլիխի մեթոդով, պարզվեց որ, ինչպես առհասարակ բոլոր պալարաբակտերիաները, այնպես էլ քռուշնայի պալարաբակտերիաները ինդոլ չեն առաջացնում: Նիտրատների վերականգնման նկատմամբ, ինչպես գրականության, այնպես էլ մեր տվյալները վկայում են, որ շտամների մի մասը վերականգնում են նիտրատները, մյուսները չեն վերականգնում:

ՔՐՈՒՇՆԱՅԻ ՊԱԼԱՐԱԲԱԿՏԵՐԻԱՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ
ԴԵՊԻ ՆԵՐԿԵՐԸ

Հետազոտողների մեծ մասը, որոնք ուսումնասիրում էին պալարաբակտերիաները, պարզել են, որ այդ պալարաբակտերիաները գրամի ներկի նկատմամբ տալիս են բացասական ռեակցիա: Հայտնի են, օրինակ, այդ ուղղությամբ կատարված Հիլտոների և Շտյորմերի, Հարիսոնի և Բարլովի (10), Դե Կինո լոսսի (11) Ցիպֆելի (9), Իզրայիլսկու, Բունովի և Բերնարդի (12) աշխատությունները:

Լյոնիսը գտնում է, որ պալարաբակտերիաները գրամով ներկվելու տեսակետից փոփոխական են: Ընդհանուր առմամբ պետք է ասել, որ ինչպես մի շարք հեղինակների, այնպես էլ մեր տվյալների համաձայն, պալարաբակտերիաները գրամի նըկատմամբ տալիս են բացասական ռեակցիա: Նըսնք լավ ներկվում են կարբոլ ֆուքսինով և ջրային ֆուքսինով: Նկատվել է նաև այն, որ երթասարդ բջիջները շատ ավելի լավ են ներկվում և քան թե ծերացածները. դրանք կամ բուրովին չեն ներկվում և կամ ներկվում են շատ թույլ իզրայիլսկին, Բունովը և Բերնարդը (12) առաջարկում են պրեկարատաները նաև էրիտրոզինով և ապա մեթիլենի կապույտով ներկել:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Տարբեր սննդանյութերի վրա քռուշնայի պալարաբակտերիաների մորֆոլոգիական ձևերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դրանք այդ տեսակետից տալիս են պալարաբակտերիաներին բնորոշ մորֆոլոգիական փոփոխություններ:

Մասպեպտոնային ագարի վրա բոլոր շտամմերն էլ տալիս են թույլ, հաղիվ նշմարելի աճեցողություն։

Մասպեպտոնային ժելատինի վրա քռուշնայի պալարաբակտերիաները տալիս են շատ թույլ աճեցողություն, առանց ժելատինը փոփոխման ենթարկելու։

Մասջուր պեպտոնային թույլոնի մեջ շտամմերից և ոչ մեկը չի աճում։

Կաթի նկատմամբ շտամմերի մեծ մասը ցույց է տալիս նույնպես քրաքարմունքը, առաջացնելով թույլ պեպտոնիզացիա, սպիտակ շիջուկի անջատումով։

2. Դեպի ներկերն ունեցած վերաբերմունքի տեսակետից նույնպես քռուշնայի պալարաբակտերիաները ոչնչով չեն արրերկում մյուս պալարաբակտերիաներից։

3. Հետազոտվող շամմերի մի մասը վերականգնում են նիտրատները, մյուսները չեն վերականգնում։

4. Փորձարկելով շտամմերը պարբեր շաքարային միջավայրում նրանցից և ոչ մեկը գազ և թթու չեն առաջացնում։

5. Քռուշնայի պալարաբակտերիաները ինդոլ չեն առաջացնում, որը նույնպես բնորոշ է առհասարակ բոլոր պալարաբակտերիաների համար։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Израильский, В. П.—Плеоморфизм клубеньковых бактерий. Труды Всесоюзного Ин-та сель.-хоз. микробиологии, том. V, 1939-1.
2. Bejerinck, M. W.—Die Bacterien der Papillionaceen Knolchen. Bot. Zeitung Jahrgang No 46, S. 725—735, No 47 S. 741—750, No 48 S. 757—771, No 49 S. 781; No 50 S. 797—804, 1888.
3. Kas Wälczaw—Über die Entwicklungzyklen der Knolchenbacterien. (Westn. d. Akademie Lomedolske Bd 3, S. 584—588).
Fehesch. m. Ünwesentl. verändert deutsch Übersetzung Zent. Blatt für Bact. II Ab. Bd 78, Haft 8/14, S. 260, 1928.
4. Корсакова и Лопатина—Взаимоотношение клубеньковых бактерий с бобовыми растениями.
1. Усвоение азота клубеньковыми бактериями.
Микробиология. Журнал общей сельскохозяйственной и промышленной микробиологии, том-III, вып. 2, 1939 г.
- 5.Петросян, А. П. и Мирзабекян, Р. И.—Морфологические изменения клубеньковых бактерий в клубеньках заспарцета в течение года.

Микробиология. Журнал общей сель-хоз. и промышленной микробиологии, том. VIII, вып. 7, 1919 г.

6. Конокотина, А. Г.—Взаимоотношение клубеньковых бактерий с бобовыми растениями.

II Морфологические изменения клубеньковых в клубеньках пуга и люпина.

Микробиология. Журнал общей сельхоз. и промышленной микробиологии, том. III, вып. 2, 1934 г.

7. Muller A. und Stapp C.—Zur Biologie der Leguminosen knolchenbakterien mit besonderer Berücksichtigung ihrer Artverschiedenheit.

Sonderdruck aus den Arbeiten aus der Biologischen Reichsanstalt für Land und Forstwirtschaft Bd 14, Heft 4, 1925.

8. Noobe F. und Hiltner L.—Kunstlich Überführung der Knolchenbacterien von Erbsen in solche von Bohnen (*Phaseolus*). Zent. Blatt für Bakt. II Ab. Bd 6, No 14, S. 449. 1900

9. Zipfel Hygo—Beiträge zur Morphologie und Biologie der Kneilchenbakteriender Leguminosen. Zent. Blatt für Bact. II Ab., Bd 32, S. 97-137, 1912.

10. Harrison, F. C. Barlow B.—The nodule organism of Leguminosae, its isolation cultivation, identification and commercial application. Zent. Blatt für Bakter. II Ab., Bd 19, S. 264-272, Bd 20, S. 441. 1907.

11. De Rossi Gino—Über die Microorganismen welche die Wurzelknöllchen der Leguminosen erzeugen. Zent. Blatt für Bact. II Ab., Bd 18, S. 289, 1907.

12. Израильский, Рунов, Бернард—Клубеньковые бактерии и нитраты. СельхозГИЗ. 1938 г.

13. Kellerman Karl and Beewith, T. D.—Die Bacterien der Wurzelknöllchen der Leguminosen. Zent. Blatt für Bact. II Ab. Bd. 16, S. 540. Original referate.

14. Fred und Davenport—Icfuense of Reaction on Nitrogen assimilating Bacteria. Journal of Agricultural Research, Vol. XIV, July 1, P. 317-336. 1918.

15. Lohnis F. and Hansep—Roy Nodule Bacteriae of Leguminous Plant. Journal of Agricultural Research, Vol. XX № 7, P. 543-554, 1920-1921.

16. Крис, А. Е., Кореняко, А. М. и Мигулина, В. И.—Клубеньковые бактерии в Арктике. Микробиология. Журнал общей сельскохозяйственной и промышленной микробиологии. Том. X, вып. 1, 1941 г.

17. Петросян, А. П.—Клубеньковые бактерии эспарцетов Армении. Труды Республиканской научно-исследовательской станции полеводства НКЗ Арм. ССР, вып. 6, 1914 г.

18. Fred Edwin, Broun A.—Physiological Study of the Legume Bacteria. Annual Report of the Virginia Polytechnic Institute, Agricultural Experiment Station P. 145-174, 1911-1912.

МЕГРАБЯН А. А.

Морфологические и физиологические свойства клубеньковых бактерий французской чечевицы

Резюме

Морфологические изменения клубеньковых бактерий французской чечевицы показали, что на основных жидких и твердых средах большинство штаммов дает морфологические изменения, которые характерны для всех клубеньковых бактерий.

По отношению к окраске надо отметить, что как и все клубеньковые бактерии французской чечевицы грам отрицательны, хорошо окрашиваются карбол-фуксином и водным фуксином, причем молодые клетки окрашиваются вообще лучше старых.

При изучении биохимических свойств штаммов часть восстанавливала нитраты, другие не восстанавливали. На разных сахара кислоты и газы не образовали. Не дали также образования индола.

Таким образом—морфологические признаки изученных нами клубеньковых бактерий французской чечевицы по своим свойствам не отличаются от клубеньковых бактерий остальных бобовых растений.

Mehrabian A. A.

The Morphological and physiological Nature of Nodule Bacteria of the French Lentils-*ervum vicia*

Summary

The morphological changes of nodule bacteria of the French lentils have shown that in the main liquid and solid media, the great majority of the strains are showing morphological changes, which are peculiar for all nodule bacteria.

In relation to the staining, it must be noted, that as all the nodule bacteria of the French lentils they are gram-negative, staining quite well by carbol-fuchsine and water-fuchsine, and the young cells in general, are stained better than the old ones.

In investigating the biochemical properties of the strains we have seen that some of the strains did restore the nitrates, the others did not. In different sugars acids and gases were not formed as well.

Thus, the investigation of the morphological characters of nodule bacteria of the French lentils has shown, that they are not differing by their properties from the nodule bacteria of the other legume plants.